



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Փիլիսոփա գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «МШАКЪ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Յ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Յ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄԷ

ՄՇԱԿ

(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՓԵՂԱՔԱՆԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի

Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտատպագրութիւնը. ТИФЛИС, Rédaction «MSCHAK».

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդին օգնելու գործը. Նոր ընկերութիւն.
—ՆԱՌԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէնք. Նամակ Ալեք-
սանդրովից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ
Անգլիայից. Նամակ Եգիպտոսից. —ԽԱՆԻ ԼՈՒ-
ՐԵՐ. —ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ. —ԲՈՐՈՍ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍՐԱԿԱՆ. Ժամատխար.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԸ

I

Տեղական ուսուցիչ և հայոց մի քանի լը-
րագիրներում երևացած լուրը՝ թէ հա-
զուի Մարգարիտիան ընկերութիւնը որո-
շեց մի յայտնի գումար յատկացնել հայոց
գրողներին օգնելու համար՝ մեզ առիթ է
առնելու զրա մասին մի քանի խօսք ասել:
Անպայման համակրելի և գեղեցիկ գործ
է նպատակ և օգնութեան ձեռք մեկնել
աղքատ մշակներին, գրական ասպարի-
ւում գործող մարդկանց: Կա վերին աս-
տիճանի պարզ և նոյն իսկ հայոց մասնա-
կի մէջ, որտեղ շատ անգամ պարզ ճշ-
մարտութիւնն էլ վէճի նիւթ է դառնում,
—ընդունված կարծիք է: Բայց, տարաբաղ-
դաբար, մեր գրական շրջաններում շատ
մուծ է անորոշ կարծիք ունեն այդ օգ-
նութեան սահմանների մասին, և շատերի
համար պարզ չէ, թէ արդեօք հասարա-
կական փողերով պէտք է օգնել անխոր-
բոր գրողներին, գրականութեան և մա-
մուլի բոլոր մշակներին, թէ միայն զրանց
մի որոշ շրջանին: Մեր գրականութեան

մէջ հասարակութեան վրա մոռենալով է
գնում ու հասարակական նպատակ պահան-
ջում թէ՛ երիտասարդ գրողները ոյժ ունի
անփական աշխատանքով և պարագլուխով
ապրելու, թէ՛ զառաւմեալ գրողը, որն ար-
դէն անընդունակ է աշխատանքի և ան-
պայման կարօտ աջակցութեան. հասարա-
կական փողերի վրա, իբրև գրական աշակ-
ցութեան վրա՝ աչք է անկում և երիտա-
սարդ խմբագիրը, որ գեռ. ֆիզիկական
ոյժ ունի չը ծանրանալու. հասարակական
բարեգործութեան վրա, և թէ ծերա-
յաւ, մատուցող և ֆիզիկական ան-
ընդունակ դարձած խմբագիրը, որ իր կեան-
քը անց է կացրել գրական մարդ աշխա-
տանքի մէջ: Մի խօսքով, թէ՛ անհնա՞ղ դը-
նեք թէ՛ ամեն կողմից լսող ձայններն, և
թէ մեր մամուլի մէջ երևացող տեղեկու-
թիւններին, պարզ կը տեսնենք, որ առանց
խղճահարմարութեան, առանց բարձր, ձեռք է
մեկնում հասարակութեանը թէ՛ այն գրո-
ղը, որ նոր է սկսել և բոլորովին ընդու-
նակ է սեփական աշխատանքով ապրելու,
և թէ՛ այն գրողը, որ արդէն անընդունակ
է դարձել ապահովելու իր և իր ընտանիքի
պարտքը, թէ՛ այն գրողը, որ կողմնակի
և շատ ձեռնառու պարագլուխ ունի, և
թէ՛ այն գրողը, որ ոչինչ կողմնակի պա-
րագլուխ չունի (կամ շատ էլ չէ ուղղու-
մունքով):

Այդ երևոյթը մենք համարում ենք
բացարձակ անհամակրելի, և թող ինչ
տալիս մեզ ասելու, որ դա արդէն չէ տա-

նում դէպի կարօտ գրողներին նպատակու-
համակրելի սկզբունքը, այլ դէպի մուրաց-
կանութիւն, դէպի այն աշխարհը, որտեղ
շրջում են ոչ թէ գրական կարօտ աշ-
խատանքներ, այլ «մեծապատիւ մուրաց-
կաններ»:

Ինչպէս սովորական աշխատանքների,
մշակների, գործարարների մէջ, այնպէս և
մաւաւոր աշխատանքների մէջ, նախ
պէտք է տիրապետի անկասկած, սեփական
աշխատանքով ապրելու սկզբունքը, առանց
ձգտելու բնու դառնալ հասարակական, կամ
բարեգործական որ և է հիմնարկութեան
վրա Այդ տեսակէտից, ինչպէս չէ կարելի
ներել այն ձրիակներին, որոնք թէ՛ և
ունեն առողջ ձեռքեր, աչքեր և ունեն,
բայց ձգտում են ապրել ուրիշի հաշուով,
նոյնպէս և չէ կարելի ներել այն գրական
մշակներին, որոնք թէ՛ և զեռ. ոյժ ու-
նեն, ֆիզիկական և մատուր աշխատանքի
ընդունակ են, բայց տրամադրութիւն են
ցոյց տալու աչք անկելու հասարակական
փողերի վրա, մինչդեռ հասարակական օգ-
նութիւնը, բարոյական տեսակէտից, պատ-
կանում է միայն զառաւմեալ, ծերացած,
աշխատելու անընդունակ դարձած, կամ որ
և է պատճառով ձախողութեան մէջ ըն-
կած գրական մշակներին, կամ նրանց ան-
օգնական որք ընտանիքներին...

Այդ հիմնական սահմանները ընկնում
գրողների օգնութեան գործում, մենք միւս
անգամ մասնանիշ կանենք մի քանի մաս-
նաւոր կէտերի վրա...

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Անգլիայում կազմվել է մի նոր հայասէր ըն-
կերութիւն Այս նոր ընկերութիւնը ուղղակի
կամ կողմնակի կազմելու ոչ մի քաղաքա-
կան կուսակցութեան կամ կազմակերպութեան
հետ, այլ նրա զլուաւոր դիտաւորութիւնն է նը-
պատել հայերի կեանքի ուսումնասիրութեան
և կենտրոն հանդիսանալ հայերին վերաբերեալ
տեղեկութիւնների համար: Ընկերութիւնը մի-
ջազային է և անուանվում է «Հայերի բարե-
կամեանքի միջազգային ընկերութիւն»: Նախա-
գահն է Բոչասթրի եպիսկոպոսը, քարտուղարը—

տիկին Սմերսոն: Ընկերութեան նպատակը ծը-
րագրված է հետևեալ կերպով:

1. Բանալ մի բնութիւն, որտեղ կը ստացվեն և
կը ծախվեն հայերի և արեւելեան գործերի մա-
սին զանազան հասարակութիւններ, գրքեր և
գեղեցուկներ, պատմական, ճանապարհորդական
և ուրիշ գրուածներ (կապոյտ գրքեր, բարեգը-
ներ, լուսանկարներ, թերթեր):
2. Կազմել ընդհանուր ցուցակ զանազան նը-
պատող ընկերութիւնների և հաստատութիւն-
ների մասին, որոնք գտնվում են ոչ միայն
Անգլիայում, այլ և Ամերիկայում, եւրոպական
ցամաքում և կղզիներում:
3. Ունենալ դասախօսների, բարոյիչների և
ուրիշ դրանց նման գործողների ցուցակներ,
յանձնարարելու այս և այն երկրներին, երբ
պահանջ կը զգացվի որ և է տեղում:
4. Մամուլին, պարզամէտի անդամներին, դա-
սախօսներին և հոգեբանական մատակարար-
ելու գրական նիւթեր հայերի մասին:
5. Ստանալ և յանձնել նպատակող գործակա-
նութիւններին գումարներ, երբ նուիրատուները
այդ նպատակով փող կուղարկեն:
6. Խորհրդակցութեան հրաւրել ժամանակ առ
ժամանակ զանազան նպատակող ընկերութիւն-
ներին:
7. Հրատարակել ճիշդ տեղեկութիւններ, որ
կը ստացվեն զանազան տեղերից, հիւպատոսա-
կան զեկուցարարներ, նամակներ, թղթակցութիւն-
ներ, վիճակագրական տեղեկութիւններ, պար-
լամենտական ճառախօսութիւններ, պաշտօնա-
կան հեռագիրներ, որոնց նպատակը պէտք է
լինի ճիշդ տեղեկութիւններ հաղորդել հայերի
մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԵՅՈՐ

VI

Կուր տեսել էք բարերի մէջ՝ փողերի, նի-
հար, սևորակ երեխաներ, որ փայտված ցնցո-
տիւններ մէջ, բոլորի ստներով, խճճված մաղե-
րով պարում, երգում են, և անդադար կրկնում
Մուշի նշանաւոր «Արքայաճ»-ը, որ մի կտոր հաց,
կամ մի քանի կոպեկ ստանան...

Անկասկած տեսել էք:—Կրանք գաղթականե-

սարսափելի կտորած է անում Հարկերից 80—90
մեռնում են. մեռնողների տոկոսը կարող է
հասնել հարկերի:

Այժմ մենք պէտք է որքան կարելի է որոշ
կանոններ տանք ժամատակարար պաշտպանվելու
համար: Այս կանոնները լուր ըմբռնելու համար,
հարկաւոր է ի նկատի ունենալ, որ նրանք հիմն-
ված են ժամատակարար թոյնի յատկութիւնների և
դարբացման եղանակի վրա: Եթէ մենք գիտենք,
որ ժամատակարար միկրոօրը լուր դարձնում է, ա-
նում է կեղտոտ տեղերում, երկար պահպանվում
է և չորանում հիւանդից, մնացած իրերի մէջ,
դարձնում է փոստը քայքայվող առարկա-
ներ և նոյն իսկ հողի մէջ, եթէ միայն այդ
հողը խնամ է, և ծածկված նեխող նիւթերով,
—այն ժամանակ մենք միջոցներ ձեռք կառ-
նենք վերացնելու միկրոօրը դարբացմանը նպատ-
տող այս պայմանները: Եթէ համոզված ենք, որ
այս միկրոօրը հարուածում է գլխաւորապէս վատ
մեռնողից և աղքատութիւնից նուազած, քայքայ-
ված կազմուածքներ, այն ժամանակ մենք կաշ-
խատենք կաղաւթի մեղ, որքան այդ հարուած
է, դուրս գալ վատ առողջապահական պայման-
ների միջոց, որոնք քայքայում են մարդու
կազմուածքը, ինչպէս են խնամ և մոռնի ընա-
կարանները, չարամիտ ու սպառնալի աշխա-
տանքը և այլն: Այսպէս, ժամատակարար թոյնի
մասին մեր ունեցած տեղեկութիւնները իրա-
ւունք են տալիս մեզ և նոյն իսկ պարտաւորու-

ԲԱՆԱՍՐԱԿԱՆ

ԺԱՆՏԱՍԻՏԸ

(Ժողովրդի համար)

III

Հիւանդութեան սկզբին՝ Գեղձերի ուռչելը. —Տա-
րեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Հիւանդութեան սկզբին՝ Ժամատակարար չարա-
զանց նման է տիֆին: Նոյն դոզը, նոյն վերքը,
նոյն ընդհանուր նուազումն ու թուլութիւնը:
Ժամատակարար առաջին դէպքերը առհասարակ
տիֆի տեղ են ընդունում: Մի քանի հեղինակ-
ներ մի ինչ որ կառք են նկատում տիֆի, մաս-
նաւորապէս բնական տիֆի ու ժամատակարար մէջ:
Մի քանիների կարծիքով, տիֆի բաղմանը
մի բնական պէտք է ժամատակարար կարողանալ
համարել:

Ժամատակարար բնական տիֆի արտաբնական
պէտք է համարել աշխարհագրական (лимфатическая
железа) ուռչելու ու բարձրելու: Ղլխաւորապէս
բարձրելում են աճում, թեկ տակի, ծնունդի
տակի և պարանոցի գեղձերը, որոնք մեծանում
են, ցատում են, յետոյ թարախակալում են և
բլչում, և թէ միայն հիւանդութիւնը տուում է
մի երկու շաբաթ: Գեղձերի ուռչումը
նկատվում են սակայն և ծանր տիֆի միջոցին,

և այս է պատճառը, որ համաճարակների սկզբ-
բին ժամատակարար դէպքերը տիֆի տեղ են ըն-
դունել:

Ժամատակարար անձամբ տեսած չը լինելով, մենք
ստիպված ենք առաջ բերել հեղինակների նկա-
րագրութիւնները: Հիւանդութիւնը սկսվում է
նախադանք նշաններով, որոնք յաճախ անուշա-
ղիք են մնում, քանի որ նրանք ոչինչ յատկա-
նիշ չունեն, և ընդհանուր են բոլոր ջերմային
հիւանդութիւններին: Այս ընդհանուր թուլու-
թիւնն է՝ արտաբնակի բացակայութիւնը, մի ինչ
որ ծանր յոգնածութիւն, և արամադրութեան վա-
տուութիւն: Յաճախ հիւանդի գլուխը ցատում է,
պտոյտ է գալիս և ամբողջ մարմինը ջարդվում
է ու սրբորում:

Մի քանի օրվայ ընթացքում ժամատակարար միկ-
րոօրը աճում է մարմնի մէջ: Երբ աճումը հա-
նում է իր զագաթնակէտին, ամբողջ կազմվածքը
թուլանում է, և այն ժամանակ նկատվում
են ժամատակարար իսկական նշանները: Եթէ թու-
լանում լինի թեկն է, և հիւանդի կազմուածքը
առողջ է և ընդունակ է, և հիւանդութեան, այն
ժամանակ հիւանդութիւնը թեկն է անցնում:
Տարբերութիւնը չէ անցնում 38—39—աստիճանից,
աճում է թեկն և թեկն աշխարհագրական չարա-
պով ուռչում են ու ցատում, հիւանդին տան-
ջում է զլխացողը, նա փխտում է, այն ինչ փո-
րը կապ է—մի շաբաթվայ մէջ գեղձերի ուռչու-
թը կամ բարձրում է, կամ թարախակալում է և

բլչում, հիւանդը սաստիկ քրտնում է և սկսում
է առողջանալ:

Տարաբաղդաբար, առողջանալը բացարձակ դէպք
է: Ընդհանրապէս հիւանդութիւնը աւելի
ծանր կերպարանք է ստանում: Սաստիկ դողից
յետոյ սկսվում է ջերմը, որը հասնում է 40°-ի
և աւելի, և իսկայն հիւանդը ընկնում է ծանր
տիֆի մէջ: Եթե ճիշդ ներսից այրում է անյաղ
ծարաւը, գլուխը ցատում է, պտոյտ է գալիս,
աչքերը կարմրում են, շաղկում ու փայլում,
թշնքը մուգ կարմրում են, լեզուն չորանում է
և նման է թուխշային լեզուի, հիւանդը զա-
ռանցման ու ապշութեան մէջ է ընկնում: Նրա
ընդեր փայլում է սարսափեցուցիչ կոշտների
պատճառով և առհասարակ ակներկ են լինում
արեւն թունաւորման նշանները: Մի և նոյն ժա-
մանակ գեղձերը սաստիկ ուռչում են ոչ միայն
արդէն յիշատակած տեղերում, այլ և մարմնի
միւս մասերում: Կաշու վրա երևում են մուգ
կարմիր, կապտադոյն կամ սև կէտեր, որոնք
գնալով շատանում են, և միանալով կազմում են
խոշոր բծեր: Այս, երբեմն լայն, բծերը փոխում
են: Հիւանդութիւնը գնալով սաստիկանում է,
արիւնը դուրս է վիժում քթից, թորերից, ատա-
մոքից և աղիքներից, սիրտը թուլանում է, մը-
կանները ձգձգվում են, կարկամում, չնչաւու-
թիւնը ծանրանում է և հիւանդը անասելի ան-
հանգստութեան ու տանջանքի մէջ մեռնում է:
Այդ է ահա ժամատակարար ընթացքը: Մահը

րի երեխաներ են, հայկական կոտորածներին անմեղ զոհներ, որոնք կամ հայր չունեն, կամ մորից են զրկված, և եթէ հայր ու մայր ունեն, ուսուցում հաց չունեն, և դեռ մանուկ հասակում իրանց թողնում են իրաւ են վերցրել պարելով կամ երգելով «հաց» աշխատելու ծանր պարտքը...

Խոցած երեխաներ: Այնտեղ, վանի ծովի ափերին, Ս. Կարապետի դեղեցիկ հովիտներում, Նիւրատի վրա՝ նրանք անհոգ, անդադար մանկական խաղեր էին կազմում, գարնանը, անհոգ թիթեւներն նման, առաւօտից մինչև երեկոյ վաղվում էին դաշտերում, ուր նրանց աշխատուոր ծնողները ձմեռվայ պաշար էին պատրաստում, իսկ ձմեռը, տաք օդաների մէջ վայելում էին ծնողական հալալ աշխատանքի հալալ պտուղները... Բայց ահա թիւրքի սուրբ փայլեց, և հազարաւոր մանուկներ դուրս չպարտեցին դժբաղդ հայրենիքից, մի մասը կոկկա, միւս մասը Բաղդադի, Եփրատի, Երրորդ մասը Լոնդոն, Ամերիկա, և ուր կամենաւ... Նրանցից չափերը ծնողների փնջերից բռնած մոտաքանդութիւն են անում, միւսները բազմաթիւ պարում և երգում են, որ մի կտոր հաց ստանան, շատերն էլ, Աստուած միայն գիտէ, քաղցած մեռնում են, կամ փետանում ցրտից... Ով է հաշուել...

Ընդունե՛ք մինչև իսկ, որ դժբաղդ ծնողներին տրվող չոր հացից մի կտոր էլ նրանց է հասնում. բայց միթէ մանկական քնքոյ մարմինը և հոգին միմիայն մի կտոր չոր հացի է կարօտ: Միթէ բացարձակ պէտք է, որ այդ բանակ վաղ-րիկները՝ առանձին քնքոյութեան, խնամքի են կարօտ և նրանց բացի հաց տալուց, պէտք է կրթել, դիր սովորեցնել, ուսում տալ, մարդ չինել: Մենք մոռանում ենք, որ առանց յատուկ հոգատարութեան, առանց յատուկ խնամատարութեան այդ «անմեղները» կամ կոչնչանան կամ կը դառնան մոտաքանդներ, թափառաշրջիկներ, ձրիակներ, անկիրթ, վնասակար մարդիկ...

Ջարմանալի կերպով դանդաղ է գործում մեր հասարակութեան մէջ զգացմունքը և խելքը: Ամիսներ քարոզելուց յետոյ՝ հազիւ դժգոհ, որ ձմեռվայ ցուրտ եղանակին՝ գաղթականներին պահպանելու համար պէտք է նրանց չոր տալ, և այժմ ամեն տեղ միայն մի բանով են զբաղված՝ չորեր հաւաքելով, չորեր և չորեր, թէև մեծ մասը հին չորեր... Բայց նոյն հասարակութիւնը չէ զգում կարծեք, որ հին չորեր տալով կամ մի քանի հազար նուիրելով «հարան» չի սաղանայոյ, այլ պէտք է ծնողներին հաց և չոր տալուց յետոյ, բաղաժախ փորձիկ որբերին մանկական վայել խնամք տանել, կրթել, դիր սովորեցնել, դաստիարակել: Մենք միայն մի քանի դէպքեր գիտենք, որ մասնաւոր ընտանիքներ իրանց մօտ են վերցրել գաղթականների երեխաներին, որպէս զի նրանց համ պահեն, համ

թիւններ են դնում մեզ վրա դիմելու մի շարք միջոցներ:՝ հիւանդութեան տարածման դէմն առնելու համար:

Այս միջոցների բացատրելու համար անհրաժեշտ է խօսել որոշ և ճիշդ կերպով: Մեր կարծիքը միշտ եղել է այն, որ միայն կտրուկ, բայց ճիշդ տեղեկութիւնները կարող են օգտակար լինել: Այս սկզբունքին մենք հետևեցինք խօսեալի համաձայնակի միջոցին թէ «Մշակի» էջերում և թէ առանձին բրօշուրներում:

Նոյնը մենք կը ցանկայինք անել և ժամտախտի վերաբերմամբ: Այս է պատճառը, որ մենք մի կողմը կը թողնենք վիճելի կետերը, կենդանունք նրանց իրեն ապացուցված: Այսպիսով դուրս է մեր մի քանի խորհուրդները չեն արդարանայ ժամտախտի վերաբերեալ սոսկ գիտական տեղեկութիւններով, բայց այսպիսի սպառնացող դէպքերում աւելի լաւ է չափաւոր ցնդող դէպքերում աւելի լաւ է չափաւոր ցնդող դէպքերում, քան թէ ոչ բաւարար ցնդմանայ դէպք մեր առաջարկած միջոցները թելադրում է մեզ ընդհանուր առողջապահութիւնը:

Մարդ ու թիւնը ժամտախտի հետ կուեղու մեր ամենազօրեղ միջոցն է: Այս տեսակէտից ժամտախտը ոչինչով չէ տարբերվում միւս վարակիչ հիւանդութիւններից, ինչպէս են, օրինակ, խոլերան: Նրա թոյնը իր աճման համար պարարտ հող է գտնում կեղտոտութեան, մասնաւորապէս փտ ող աղտոտութեան մէջ: Փոռումն

էլ զրկել կարգաւ սովորեցնեն, և օրինաւոր կերպով մեծացնեն: Բայց դեռ քանի հարիւր, եթէ չասենք հազար՝ օրը, փոքրիկ երեխաներ կան, 8—10—12 տարեկան, որոնց ոչ ոք չէ ուղղում պահպանել, և իր խնամքի տակ առնել:

Վանի մէջ միսիօնարական մի ընկերութիւն որ բան ոչ է բանում յատկապէս կոտորածից յետոյ որը մնացած երեխաների համար: Լոնդոնում ծրագիր են կազմում Հայաստանից որբ երեխաներին Անգլիա տեղափոխելու և կրթելու համար: Նոյն իսկ Երուսաղէմի մէջ, գերմանական մի ընկերութիւն կը Պոլսի կոտորածից ազատված որբերի համար կրթարան-ապաստարան է բացել, բայց մեր հասարակութիւնը, մեր շրջապատը միայնակ միսիօնարները ստանալիս կերպով նայում են, թէ ինչպէս գաղթական-մանուկները ցնցոտիներով թափառում են փողոցից փողոց, բազմից բազմ, նայում են նրանց «ծիծաղելի» պարին և երգերին, և շատ-շատ մի քանի կօպէլ տալիս, ու անցնում իրանց գործին...

Հրաշալի է, այնպէս չէ...

Խ. Մարտիան

ՆԱՄՍԿ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

Փետրվարի 4-ին

Երէկ, փետրվարի 3-ին, հաշտարար դատաւոր պ. Նադիրաձէ յայտարարեց, որ Երևանի պ. նահանգապետը հաստատել է քաղաքային դռնայի նորընտիր ձայնաւորներին իրանց պաշտօնի մէջ: Այսօր բոլոր ձայնաւորները, համաձայն օրէնքի, երդում ընդունեցին: Ուրեմն մեր քաղաքային ինքնակարգութիւնը պաշտօնապէս հաստատված է և այսօրվանից մենք ունենք մեր դռնային Ուրախութեամբ արձանագրելով իրողութիւնը՝ ցանկանում ենք ապագայ գործողներին կատարեալ աջակցութիւն:

Մեր քաղաքում գտնվող գաղթական հայերը խղճալի վիճակի մէջ են: Չունեն ոչ օրինաւոր ընակարան, ոչ հազուատ, և ոչ ապրուստ: Լինելով երկրագործ շինական ժողովուրդ, պարզ է որ չը գիտեն ոչ մի արհեստ: Գժապիտաբար, ձմեռ է և բացօթեայ աշխատանքներ չը կան, որպէս զի միջին շաբաթ կարողանայ գտնէ մշակութեամբ իր և իր ընտանիքի օրակուսի պարէնը հայթայթել: Բարեգործական ընկերութեան վարչութիւնը թէև տուեց մարդապաշտ երկու բուրդ, բայց 2 բուրդ ինչ է մէկ մարդուն ամբողջ ձմեռը, այն էլ այս տարվայ սարսափելի ձմեռը... Ամօթ մեր քաղաքին, որ չը կարողացաւ այդ կենդանի նահատակներին մարդու պէս պահել, գտնէ մի ձև, մինչդեռ մեր աղքատ գիւղական հազարաւոր ընտանիք, և իրանց բերանի պատառը կիսում թշուառ. եղբայրների հետ: Մեր շինականների մարդասիրութիւնը արժանի է գովեստի:

Շիրակցի

կարծես կերակուր է մատակարարում միկրօբների զարգացման:

Ինչ է փտ ու մն:

Փտումն—օրգանիկ մարմինների և նիւթների քաղցրամիւս են, նեխումն: Օրգանիկ մարմինները—կենդանիների ու մարդու դիակներն են, բոյսերը և ձահիճները, կենդանիների ու մարդկանց արտաթորութիւնները: Այս մարմինների փտումն պահանջում է որոշեալ աստիճանի ջերմութիւն և խոնավութիւն: Փտումից առաջանում են այնպիսի նիւթեր, որոնք կերակուր են դառնում միկրօբներ:

Աւելորդ կը լինէր օրինակներ բերել այս փառքը ապացուցելու համար: Զանազան պատմութիւնը մի սոսկալի դատաւիճի է կեղտոտութեան: Հնդկների ու եգիպտացիների հակառողջական կեանքը յիշատակվում է ամեն տեղ: Նեղոսն ու Գանգէսը աղտոտութիւնների կլօակներն են, և հենց այդ երկրներն են (ինչպէս մենք տեսնում) ժամտախտի բերքը: Նոյնը պէտք է ասել և իրակ—Արաբի (Արաբստանի մասին), որտեղ միանում են Տիգրիսն ու Եփրատը և որտեղ մեր դարում շատ յաճախ է երեացել ժամտախտը: Անտարակոյս մաքրութեան և առողջապահական աջող պայմաններին պիտի վերագրել, ինչպէս ասել ենք, այն հանգամանքը, որ Երօպայում այլ և ոչ չէ տարածվում ժամտախտը:

Մեր ասածներից ակնհայտ է դառնում, որ մաքրութիւնը պիտի մեր ամենագլխաւորը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր քաղաքային դռնային փետրվարի 10-ի նիստում մի վերին աստիճանի համակրելի որոշում կայացրեց—դիմել կովկասեան կառավարչապետին և թոյլտուութիւն խնդրել՝ հանգանակութիւն բանալու յողում Թիւրքիայից եկած գաղթականներին: Այդ համակրելի հարցի յարուցողը եղաւ ձայնաւոր Ալեքսանդր Բոտինեանց:

Մենք ստացանք Լոնդոնից մի ցուցակ այն բոլոր հրատարակութիւնների և դրքերի, որոնք վերջին երեք տարվայ ընթացքում լոյս են տեսել հայոց հարցի վերաբերմամբ կամ նուրբոված են Հայաստանին և հայերին: Մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին այդ հայկական դրականութեան հետ:

Վաղը, փետրվարի 14-ին, Ներսիսեան դպրոցի հիմնադիր Ներսէս Ե. Կաթողիկոսի մահուան տարեդարձի օրը, տեղի կունենայ հոգեհանգիստ Վանքի մայր եկեղեցւում, և յետոյ Ներսիսեան դպրոցում կը կայանայ տարեկան ահա Գալուստի հոգաբարձութիւնը և տեսուչը կը կարգան դպրոցի անցեալ 1895/96 տարեշրջանի տնտեսական և ուսումնական հաշիւները: Այս տարի ակտի ժամանակ ի միջի ալըց կը յայտարարվի «Համաբարձում արցանակին» արժանացած աշխատութիւնը. նոյնպէս արցանակներ կը բաժանվեն դպրոցի ամենաառաջնորդ աշակերտներին:

Վերջին մի քանի օրերում բժաւոր տիֆի դէպքեր քաղաքում համեմատաբար աւելի քիչ եղան:

ԽԱՆԻՆԻՆԻ աւանից մեզ գրում են. «Սաստիկ ձմեռ է. տիւր, ցուրտ օրերը յաջորդում են իրար, շարունակ ձիւն է տեղում. ոչ մի տարի այսքան ձիւն չէ եղել մեզանում: Երկինքը շարունակ ամպամած է, երբեմն արեւ միայն մի քանի ժամ երևում է: Զուրտ է եղանակը, ցուրտ են և մարդկանց սրտերը... ձմեռը իր սառը կընքն է դրել ամենքի վրա: Լրագիրը ամեն օր բերում է նոր-նոր թշուառութիւնների լուրեր, մեր հաղորդարու եղբայրները մերկ ու քաղցած՝ ձմեռվայ սաստիկ ցուրտին թափառում են գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, կտոր հաց խնդրում: Գժապիտների ձայնը արձագանք գտաւ, շատերը շտապեցին ամբողջ մասամբ թշուառների վիճակը. ամեն կողմից օգնութեան ձեռք մեկնեցին և դեռ մեկնում են: Միայն Խանքենից հասարակութիւնը սառնասիրտ վերաբերվեց դէպի այդ գաղթական թշուառները: Այստեղ էլ եկան այդ դժբաղդներից, մենք էլ տեսնեք մեր աչքով նրանց կրած աննկարագրելի տանջանքներին հեռքերը, բայց դրանցից և ոչ մէկը չաղբից այստեղի հայերի թմրած ու սառած սրտերի վրա»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Նորբերս այստեղ

խառն ու հոգս լինել: Այժմ և եթ, չը սպասելով ժամտախտի մօտենալուն, ամենքը պիտի աշխատեն մաքրել ու զարուհի մաքրել պահել իրանց տունը, իրանց գիւղն ու քաղաքը: Պիտի հասկանան, որ մաքրութեան մէջ է փրկութիւնը—մաքրութիւն անելի, մաքրութիւն փողոցների, մաքրութիւն ամբողջ գիւղի ու քաղաքի: Գաղափարային ու գիւղացին չը պիտի բաւականանան իրանց տունը միայն մաքրել պահելով, այլ բաւական չէ.—իրանց սեփական օգտի համար քաղաքների ու գիւղերի բոլոր ընկալիչները պիտի միանան, համերաշխ գործենու համար: Երբեք չը պէտք է մոռանալ, որ հարեանիս օգնելով, նա իրան է օգնում և որ ոչ մի գահ, ոչ մի ծախս չը պէտք է խնայել այսպիսի մի բօսէում: Մեծ քաղաքները, որտեղ կառավարութեան անմիջական հսկողութիւն կայ, որտեղ բժիշկներ ու ընտրիմայ մարդիկ կան, հեշտ է մաքրութեան գործը կազմակերպել, բայց գիւղերում այդ գործը պիտի հողան ամբողջապէս իրանք գիւղացիք և մենք կառավարիչներ, որ գիւղի բնահասն, ուսուցիչը, և բանիմաց մարդիկ գիւղացիների միջից բանաւոր խմբեր կազմէին և հերթով աշխատել տային: Այս խմբերի գործը պիտի լինի հեռացնել գիւղից մաքրական արտաթորութիւնները, որոնք (արտաքնոցների հոբեր չունենալու պատճառով) գիւղերում համարեա ամեն տեղ բացօթեայ են մնում, սառկած կենդանիները և այն բոլորը, ինչ որ կարող է վտել: Նը-

վախճանվեց մի դիմագործ՝ Խաչի Սափարեանց, որը կտակել էր 100 բուրդի հայոց եկեղեցուն և առանձին դռնար ընէլիս համար, մի աղեղ սովորութիւն, որ դժբաղդաբար դեռ գոյութիւն ունի մեր մէջ մինչև այսօր: Փոխանակ խեղճ ու անաէր գաղթականներին յատկացնելու դռնարները, փոխանակ աղքատ ու թշուառ տեղացի մի քանի ընտանիքներին օգնելու, և վերջապէս գտնէ մտածելին եկեղեցու համար մի գիւղաւոր ձեռք բերելու,—որի բացակայութիւնը սաստիկ դժուարութիւններ է ներկայացնում,—փող են կտակում ընէլիս համար, որը անպատաւեր մի սովորութիւն է»:

ՀԻՆԵՆԻՆԻՆԻ մեզ գրում են փետրվարի 7-ից. «Յունվարի 25-ին սաստիկ ձիւն եկաւ 6—7 վերջով բարձրութեամբ: Այդպիսի ձիւն էլ ամսիս 5—6-ին տեղաց: Զմեռվայ ընթացքում եկած բոլոր ձիւնները միասին առած՝ 1 1/2 արշին խորութիւնից անցնում է: Ամբողջ քաղաքը ձիւնի տակ կորած է. կառուներից թափած ձիւնները բազմաթիւ դիմել են տների բարձրութեանը, փողոցներում երկնեկութիւնը դժուարացել է: Երբօրդ ամիսն է կառքերի տեղ սահանակներ են բանում. արեգակի երես չենք տեսնում. միայն այսօր պարզ արեգակը վաղում է և չը նայելով դրան ստուերում կախած Բեռնարի ջերմաչափը, կէսօրին—10⁰ է ցոյց տալի: Վտեւերները կրկնակի և երեքուկի թանգացել են,—աղքատ դասակարգի համար անստուգելի դարձել: Իրաւ որ այսպիսի ձմեռ չէ եղած Նախիջևանում»:

ԻԳԻԻՆԻՆԻ մեզ գրում են. «1896 թվ. օգոստոս ամսից մինչև այսօր խեղճ քահանաները դեռ «Արարատ» ամսագիր չեն ստացել, չը նայած որ Լիմաձինը մեզանից շատ մօտիկ է և փողերն արդէն գործակալների ձեռքով հաւաքված են և մտած գանձարան, միթէ չէ կարելի համարները ուղարկել ուղղակի քահանաների անտան, պատուով, փոխանակ ուղարկելու գործակալներին, որոնք ամիսը մի անգամ փոփոխվում են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Համայնքների Ժողովում

Անգլիական համայնքների Ժողովի փետրվարի 12-ի նիստում տեղի ունեցան հետեւեալ հարցապնդումները:

Ստիվենսօն. Արդեօք Երբ է սպասվում, որ վեց մեծ պետութիւնների մշակած ընթերցման միացեալ հաղորդագրութիւնը ներկայացվի սովորական:

Կըրզօն. Ընթերցման ծրագիրը դեռ հաւանութիւն չէ ստացել վեց պետութիւնների կող-

րանք պիտի հսկեն նոյնպէս, որ գիւղացիները միշտ մտքուր պահեն իրանց անբը և հաւաքած աղբը ամեն օր դուրս տարվի: Այս բոլոր արտաքին գուրդուր տանել և թաղելու առանձին փոխերում: Բացի այդ, անհրաժեշտ է արտաթորութիւններից կեղտոտված հողը գտնէ կէս արշին խորութեամբ վերցնել և անչէլ կիր ցանել, քանի որ միկրօբը զարգացում է և գետնի մէջ:

Այստեղ մի դժուար լուծելու խնդիր է ծագում.—ինչպէս վարել կուրի և անիւնի հետ, որոնք միակ վառելու նիւթն են մեր գիւղերի, նոյն իսկ գաւառական քաղաքների համար ի հարկէ, մենք չենք կարող արգելել նրանց գործածութիւնը և նոյն իսկ պահանջել, որ նրանք գիւղից դուրս տարվեն: Այս մի չարիք է, որի հետ մենք պիտի հաշտվենք. կարելի է ասել, որ ցանը վնասակար չի լինի, եթէ նա լաւ չոր է, վնասնորոյ մենք խորհուրդ կը տայինք նրան չարացնել ու պահել ծածկած տեղ, որպէս զի անձրեւ չը թրջի և չը յարուցանի նրա մէջ այն վնասակար փտումն:

Մենք այսքան երկար կանգ առանք մաքրութեան վրա, որովհետեւ նա անաղիս նշանակալի թիւն ունի ժամտախտի հետ կուեղու գործում:

Թ. Վ. Արծրունի

միջ, այլ միայն նրանց Կ. Պոլսի ներկայացուցիչները կողմից: Արանցից դեռ չէ ստացվել ծրագիրը վերջնական ձևով, այդ պատճառով ներկայումս անկարելի է ասել, թե՛ երբ այդ մասին առաջարկություններ կանվեն սուլթանին:

Բրիտի Բ օ ռ ճ եր տ ս հարցապնդում արեց Կիարոս ապաստանած հայերի մասին:

Կը ը ղ օ Ն. Կղզու կառավարչապետը անպատեհեր ամսին յայտնել էր, որ 80 հայ վախճանականներ են եկել Լարնա Գրանց կեսը ցրվեցին ուրիշ տեղեր, յետոյ հոկտեմբերի սկզբներին նորից տեղեկություն ստացանք դարձեալ 40 մարդու գալու մասին: Այնուհետև որոշ ցուցմունքներ չենք ստացել. բայց հաւանական է, որ մեծ թվով գաղթողներ չեն եկել: Բայց դրանից մասնաւոր գործակալութեան միջոցով Կիարոս են գնացել մօտ 20 հայեր, բաղկացած կանանցից և երեխաներից, որոնցից մի քանիսը ուղարկվել են Եգիպտոս: Հայ գաղթականների Կիարոս կղզու ցամաքը դուրս գալու դէմ ոչ մի արգելքներ չեն տեղի ունեցել: Բայց ապագայում նրանց ընդունելու համար պէտք է ասեմ, որ Կիարոսի կառավարութեան ձեռքում ոչինչ գործակալ միջոցներ չը կան և աշխատանքի համար էլ ոչ մի ձեռնարկություն չէ նախատեսվում: Չը կարելի յոյս դնել մասնաւոր ձեռնարկությունների վրա: Այսպիսի հանգամանքներում հաւանական է, որ եթէ Կիարոսում ապաստան որոնող հայերի հոսանքը մեծանայ, անգլիական կառավարութիւնը աչքի առաջ ունենալով կղզու ժողովրդի յանձնը՝ իր կատարելագործելու ձեռքով արգելքներ կը դնի հայ գաղթականների այնտեղ հաստատվելուն (1):

Ինչպէս երևում է, Կ. Պոլսում գրութիւնը ներկայումս աւելի երկիւղալի է, քան երբ և ինչեղել է: Արտաստարգ թիւրք կուսակցութիւնը, որ առաջ բողոքովն առանձին էր գործում և նոյն իսկ չէր կամենում որ և է կապ ունենայ հայ յեղափոխականների հետ, այժմ բացարձակ յայտնում է, որ միանում է հայ յեղափոխականների հետ՝ տիրապետող աւերիչ թէթիւր դէմ կռուելու համար: Յայտնում, որոնք թիւրք Կ. Պոլսում 200,000-ից աւելի է և որոնք նոյնպէս հայերի դէմ էին դնում և, յամենայն դէպս, չէզոք դիրք էին բռնել Կ. Պոլսի խռովութիւնների և հայերի կոտորածի ժամանակ, այժմ, Կրեաթի վերջին անցքերի պատճառով, սաստիկ գրգռված են թիւրքերի դէմ: Ուրեմն, դժգոհ տարբեր մէկի տեղ այժմ երեք են դարձել և բռնկվելու պատրաստ հրահրվելու շատ շատ են Կ. Պոլսում: Այդ երկիւղալի դրութեամբ պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Կ. Պոլսում, ինչպէս հեռադրում են այդտեղից փեթվարի 2-ից, շեղապանները դադարի խորհրդակցություն գումարների և բաժանեցին Պէրայի թաղերը վեց կարգի: Այն դէպքում, երբ Կ. Պոլսում անկարգութիւններ ծագեն, ամեն մի զեապանատուն իր վրա պէտք է առնի թաղերի մի որոշ մասը: Կ. Պոլսում մնացող ծովային պահակ զորքի վեց բաժանիժն առաւ ուղղմանը թիւրք է ստացել և հրաման՝ դէմը գործ դնել հէնց որ փողոցներում գումարումներ տեղի ունենան:

Մի ուրիշ հեռագիր հաղորդում է Կ. Պոլսից, որ «Մեհապօլիսի Մարիտիմ» չորհրդակցին ընկերություն ամենամեծ չորհրդակցին մէկը՝ «Տիւրք» վարձված է Credit Lyonnais բանկի կողմից, որպէս զի վտանգի դէպքում՝ ընդունել ծառայողներին և գանձը: Մի ուրիշ ֆրանսիական չորհրդակցութիւն է յատկապէս նրա համար, որ հարկաւոր դէպքում ապաստան տայ ֆրանսիական հպատակներին:

Սամոս քաղաքից մեկ գրում են, որ մի քանի ժամանակ առաջ, ընդհանուր և երման ժամանակ, բանտից արձակվեցին 31 հոգի, որոնք բռնված էին իբրեւ քաղաքական յանցաւորներ: Դրանցից 27 հոգի հայեր էին, 2-ը յոյն, 2-ը թիւրք: Թիւրքերն էլ մեղադրված էին իբրեւ հայոց չարժան գործակից:

Սփիա քաղաքում հրատարակվող «Մակեդոնիա» լրագիրը ասում է, թէ Մակեդոնիայի ժողովուրդը պատկանում է այն ազգերի թւին, որոնք չեն կորցնում իրանց ազգային բնաւորութիւնը, ինչպիսի ծանր կացութեան մէջ և գաղնվելն նրանք, բայց մարդկային համբերութիւնը և զինակցանութիւնը սասման ունին թիւրքաց

լուծը, որ բաժին է ընկել Մակեդոնիայի բնակիչներին, այնքան ծանր է, որ այլ ևս ոչ ոք չէ մնացել տանելու: Հետեւ է ժամանակը, շարունակում է լրագիրը—որ ժողովուրդը ճանաչի իր վիճակը, իր ոյժերը, իր մարդկային պատիւը, գոյութեան իրաւունքը և ուղարկութիւն չը դարձնելով իր ոչ-անկեղծ բարեկամների խորհուրդներին—համբերել և սպասել—թո՛քափի իր վերայից լուծը և թիւրքաց կայսրութեան արգէն մարած մնացորդների վրա ստեղծի իր երջանկութիւնը և ապագայ բարգաւաճումը: Ժամանակ է վերջ դնել մուրուռներին և անվճարական խոտորումներին, որովհետև նրանք ոչինչ են: Խրակնութիւնը պահանջում է, որ մենք զբաղվենք մեր վիճակով, և մենք պէտք է նրա վրա գործադրենք մեր ամբողջ ոյժը և միտքը: Մեր ամբողջ ուղարկութիւնը պէտք է դարձնվի կուրվաւ, այդ կուրվա պէտք է լինի մեր միակ նըպատակը:

Ինչպէս երևում է հեռագրական տեղեկութիւնից, խաղիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայում համալրական ցույցեր են տեղի ունենում Յունաստանի հասցէին: Լոնդոնում, փետրվարի 7-ին, Բրայսի նախագահութեամբ մի մեծ միտնդ տեղի ունեցաւ, որը կարծիք յայտնեց յօգուտ Կրեաթի միացման Յունաստանի հետ: Խաղիայի Հռօմ, Միլան, Նեապոլ քաղաքներում հնչեցնախրական ցույցեր են կատարվում: Միացեալ Նահանգներում, սենատը պաշտօնապէս ընդունեց Յունաստանին համակրութիւն յայտնելու առաջարկը:

Մերումի Գլադստօնը, որ ներկայումս գտնվում է Կաննում, հետեւալ հեռագիրն է ուղարկել. «Ես չեմ համարձակում խրախուսել Յունաստանին, որովհետև չեմ կարող օգնել նրան, բայց ես շատ կուրախանամ նրա ազնուութիւնը տեսնելով: Ես յոյս ունեմ, որ մեծ պետութիւնները կը ինչն, որ հարկաւոր է ուղղել իրանց համբաւը:

Ֆրանսիական պատգամաւոր Ժօրէս մի խօսակցութեան մէջ, որ ունեցաւ Հանստօյի հետ, յայտնեց, որ ֆրանսիական զօրախմբի Կրեաթի ինչեղել, իբրեւ պատերազմական ակտ, պէտք է հաւանութիւն գտնէ պարլամենտի կողմից: Հանստօ պատասխանեց, որ սուլթանը ինքն է ինչեղել, որ զօրքը ինչի և այդ հարկաւոր էր պատերազմի առաջն առնելու համար:

Առաջ եմք բերում զնդապետ Վաստի հրաւերը, որին յունաց Գեորգ թագաւորը նշանակել է յունաց նաւատորմի հրամանատար և ուղարկել գրաւելու Կրեաթ կղզին: Հրաւերը ուղղված է կրեաթցիներին: Այն տանկանքները, որ դուրս կրում էք և մոլեռանդ ամբողջ շարութիւնները, որոնց դուք ենթակալ էք, զարթոյրին ազգային ինքնաձայնութիւնը և բռնա շարժում առաջ բերին յայն ժողովրդի մէջ: Մագուժով և կրօնով ազգակից ժողովրդի թշուառ վիճակը, մի ժողովրդի, որի ճակատագիրը կապված է Յունաստանի ճակատագրի հետ, չէ կարող երկար տևել: Թագաւորը որոշեց վերջ դնել այդ վիճակին զինուորական գրաւումի միջոցով: Յայտնելով այդ մասին կղզու բնակիչներին, տառնց կրօնի և ազգութեան խտրութեան, ես մի և նոյն ժամանակ խոստանում եմ թագաւորի անունով, որ պէտք է պաշտպանեմ բնակիչների պատիւը, կենսը և բոլորը, միակերպ յարգելով բոլորի կրօնական համոզումները:

ՆԱՍՏԱԿ ԱՆԳՎԱՑՈՒՄ

Լ օ Ն ը օ Ն, յունվարի 30-ին

Այս առտու, չաբաթ, «Տէյլի Կրաֆիք» անալիզալ մը կը նուրիք մեղի: Կը ծանուցանէ, թէ երկուշաբթի օրէն սկսեալ պիտի հրատարակէ վերջերս Հայաստան կառարուած ուղեորութեան մը նկարագրութիւնը: Աւելորդ չեմ համարում «Մշակի» ընթերցողներուն ներկայացնել այդ ուղեորութիւնը, որ նշան մըն է, թէ Հայաստանի աղէտները իրենց թարմութիւնը միշտ կը պահեն, հակառակ ժամաւորաբար ու հնգական սովին, որոնք սակայն կընախէ հետ, կարեւորութիւն ունին հոս:

«Տէյլի Կրաֆիք» իր ծանուցումը կը դնէ հետեւալ վերնագրին տակ. «Մահաւան ստուերին

հովիտը, ուղեորութիւն մը Հայաստանի սրտին մէջէն» ու ետքէն կը գրէ.

«Մեծ հաճոյքով կը ծանուցանենք, թէ «Կրաֆիք» (պատկերազարդ շաբաթաթիւթ) և «Տէյլի Կրաֆիք» մասնաւոր մէկ արուեստագէտը և մասնաւոր մէկ թղթակիցը աւարտեցին քաջագործական ուղեորութիւն մը Միջերկրականէն Սև ծովը, Թիւրքիոյ ասիական նահանգներուն մէջէն: Մեր ներկայացուցիչները Մերսին ցամաքի իջնալու ճամբորդեցին Տարսուս, Ատանա, Մաբաշ (որ հասան Հայր Սալվաթօրի սպանութեան ընտելութիւնը կատարուած պահուն), Ջէյթի, Խարբեթ, Ալն (վերջին կատարածին վայրը) և Էրզրում, ու անկէ Տրապիզոն, անցնելով այս ամբողջ թէ փոքր և թէ Մեծ Հայքէն, ու անհղ ջարդերու տեսարաններէն:

Հաւանօրէն քսան տարիէն աւելի է, որ փոքր-Ասիոյ այսքան երկայնապատում և այսքան չափազանքական ուղեորութիւն մը չէ նկարագրուած այս երկրին (Անգլիոյ) մէջ: Երբ 1895-ին Սասուն յանձնաժողովը կը գումարուէր, Հայաստանի սահմանադրութիւնը դեբերող բազմաթիւ թղթակիցներէն երկուքը միայն կրցին երկիր մտնել, ան ալ Էրզրումէն անտին անկարող ըլլալով թափանցել: Նորադրոյն խռովութիւններէն ի վեր ժամուրի ոչ մէկ ներկայացուցիչ փոքր-Ասիա ոտը կոխեց: Կրաֆիքը և «Տէյլի Կրաֆիք» տէրերը մտածելով, որ Հայաստանի հիմնական համեմատաբար հանգարտ վիճակը առաջին պատերազմի կընծայէ ամեն կրքէ ազատ ընտելութիւն մը ընելու անցած երկու տարուան սուկայի դէպքերուն վրա, ու ժողովրդին տառապանքներուն ճշմարտապէս տեղեկ ըլլալու, դրեցին երկու կարող ներկայացուցիչ, որ փորձեն երկրին ներսը մտնել:

«Անգլիան էին այս ձեռնարկին յաջողութեանը խափանարար արգելքները: Թիւրքը բնութեամբ կասկածաւ է, և զիւրին գործ չէ զինքը խաբելէն շատ կեղծումներով և խելքի էն մօտի պատմութիւններով իսկ: Մեր ներկայացուցիչներուն նշանաւոր յաջողութիւնը պէտք է վերագրել այնքան իրենց քաջութեանը և հնարագիտութեանը, որքան արեւելեան շեղումներու և արեւելեան միջոցներու հմտութեանը: Հիմա մենք չենք ուզել երևան հանել անոնց նոյնութիւնը, կամ պատմել, թէ ինչ կերպով ճամբորդեցին, եթէ ոչ փորձանքի կը հանդիպեն իրենց նպատակին հասնելու համար անմեղօրէն անոնց օգնողները. կը բաւէ ըսել, թէ իբր օրագրի թղթակիցներ չանցան անոնք: Բայց և այնպէս յաջողեցաւ իրենց հաւաքել բազմաթիւ նիւթեր, որոնք մեծ արժէք ունին ոչ միայն Հայաստանի խռովութիւններուն և սուլթանին խոտացած վարչական բարեկարգութիւններուն նկատմամբ, այլ և կը կազմեն պատկերալից ու խոյտարդէտ եղական հանդիսարան մը փոքր-Ասիոյ ներսը բնակող գեղանկար ու անհանգարտ ժողովրդին ընտանեկան կեանքին ու բարբիւն:

«Առաջին յօդուածը պիտի հրատարակենք երկուշաբթի, և նկարագրութիւնը պիտի շարունակուի օրէ օր»:

Օրուան այսքան կարևոր ինդիկներու միջոցին, երբ անգլիական օրաթերթ մը, որ համեմատաբար միաներուն շատ ծաւալուն չէ, իր անձուկ էջերուն մէջ մասը կը նուրիք Հայաստանի, ներքին է ենթադրել թէ ուղարկաւ նոյնութիւններ երևան պիտի բերէ: Կը յուսամ, թէ «Մշակի» ընթերցողները դժգոհ չեն մնար, եթէ իրենք ալ կարդան այդ յօդուածները, ուստի կը զրկեմ չանցեալին պատմութեան կարեւոր մասերը:

ՆԱՍՏԱԿ ԵՂԻՊՏՈՒՄ

Գահիրէ, փետրվարի 1/13-ին

Մինչև այժմ Եգիպտոս ապաստանած են աւելի քան 2000 հայեր: Դրանցից մօտ 500 հոգի բարեկեցիկ և արհեստաւորներ են, որոնք պէտք չեն ունեցած տեղւոյս գաղթականութեանց նիւթական օգնութեան, իսկ մնացեալները անօթի և մեղկ, որոնք խնամվելով Աղէքսանդրիոյ և Գահիրէի հայոց եկեղեցիներէ մէջ, հետզհետէ պաշտօններ և պարտավորեց տնտեսած են: Այժմ Աղէքսանդրիոյ մէջ մօտ 800 հոգի կը խնամուի: Այնտեղի ազգային վարչութեան խնամքով: Այդ 800 հոգիէն 140-ը որք երեխաներ են, մօտ 30

—40 կանայք և աղջիկներ, իսկ մնացեալները տղամարդիկ են: Գահիրէի եկեղեցիի մէջ ապաստան գտած են և կը խնամուին տեղւոյս աղջկային վարչութեան հսկողութեան տակ մօտ 250 հոգի:

Գաւառացիները շատ հեղ և չարբաշ են. երբ որ իրանց համար գործ կը գտնուի թէ այստեղ և թէ Աղէքսանդրիա, առանց զիտողութիւն առնելու ամսականի քանակութեան մասին, անմիջապէս եկեղեցիները կը ձգեն և գործի կերթան իսկ բնիկ պղծեցիները, ընդհակառակը, կամ երբեք գործի չեն երթար, եթէ կը գտնվի գործ ու կերթան՝ շատ չուտով գործը կը ձգեն և կը դառնան եկեղեցի ձրի հաց և կերակուր ուտելու համար, առանց նկատի առնելու, որ այդ հացապէս կը մուրալի քաղաքի օտար ազգի գաղթականութիւնէ:

Յունվար ամսոյ 15/27 և 17/29-ին երկու քիչեր, տեղւոյս անգլիական գաղթականութիւնը սիրողներու մի խմբով ներկայացումներ տուաւ խղիվական օպերայի մէջ յօգուտ հայ փախստականներէ բացված հանգամանքներին: Այդ երկու թատերական ներկայացումներն էլ շատ փայլուն և յաջողակ անցան, թատրօնը երկու քիչերներն էլ լեցուն էին անգլիացիներով և ամերիկացիներով: Մի քանի օթեակ իրանց քառապատիկ արժէքներով ծախուեցան: Կը լսուի որ երկու ներկայացման զուտ արդիւնքը եղած է մօտ 300 անգլիական ոսկի:

Վաղը երկուշ էլ, կրկին խղիվական օպերայի թատրօնի մէջ, մի ալ ներկայացում կը տրուի նախաձեռնութեամբ Գահիրէի հայոց «Ընթերցարան» ընկերութեան, յօգուտ նոյն հայ փախստականներու հանգամանքներին: Կը յուսացվի, որ այս ներկայացումն ալ յաջողակ անցի և արդիւնաւոր ըլլայ նիւթապէս: Այդ ներկայացումը պէտք է տրվի Պոլսէն հոս ապաստանած «Թրեանցի» խմբի ձեռամբ:

Մ. Ա.

ԽԱՆԵ ԼՈՒՐԵՐ

ԳՈՂԻՍ ՕՐԱԳՐՅՈՒՄ

Այդպէս ուրեմն, «աներկայից» բժիշկ Ա., որ հրաժարվել էր օգնել գաղթական հիւանդին, և նոյն իսկ ուրաջաւ իր լեզուն, մինչև այժմ մընում է ան յայտնի բժ. Արծրունի յայտնեց, որ այդ ինքն չէ: Այդ մենք զիտէինք: Բժ. Ալամալեան յայտնեց՝ որ և ոչ էլ ինքն է: Այդ էլ մենք զիտէինք: Միայն ինքը իսկական «Ա»-ն է, որ չէ դուրս գալիս և չէ ասում. «Այդ ևս եմ, ուրեմն, պարոն բժիշկներ Ա., անհանգիստ մի լինիք»:

Ինչ անենք, ընթերցող, պատուէր այդ «թագված» բժիշկի դիմակը և յայտնեք նրա անունը en toutes lettres, թէ էլ մի քիչ համբերեք: Հայ քրիստոնէայ եղբ, համբերութիւնը մեր փնչակն է, ուրեմն էլի քիչ սպասեք...

Ընթերցող, շնորհատրեցեք մեկ մի փոքրիկ յարթութիւն: Մենք, վերջապէս, սովորեցինք նշանաւոր թամազա և աննշան խմբաքի Արդար Յովհաննիսեանին հաշիւ տալու եղանակը: Այս օրերս Էջմիածին ուղարկվող խաչատուր Արթուրի թոռնիկ համար հանգամանկված 200 ռուբլի, այ. Յովհաննիսեան տպագրել է թէ որ օրը ուղարկեց, երբ, ինչ ճանապարհով և պատի ինչ կիկտանցիլով Արթուրին: Ինչ որ լաւ է, լաւ է: Տեսնեք, այ. Յովհաննիսեան, թէ ինչ շատ ու ձոր՝ կայ այդ տեսակ որոշ և քիչ հայի և այն տեսակ հաշիւների մէջ, որ գրվում են այսպէս. «Մենք ուղարկել ենք այնտեղ, որտեղ պէտք է ուղարկէինք»: Երանի թէ միշտ այդպէս եղած լինէր և միշտ էլ այդպէս շարունակվի:

Դէ՛ս, ընթերցող, շնորհատրեցեք մեր «յարթութիւնը». տեսնում էք այժմ, որ երբեմն «խրատը խելին» էլ մի բան կանի...

Խեղճ Արթին փաշա Տատեան: Ուղում էին այնպիսի հրաշքներ գործել, որ հայ ազգը քեզ վրա նայի, իսկ այժմ այն օրն ևս ընկել, որ չես ուղում մի մարդ էլ քեզ տեսնի: Փակված իր տան չորս պատերի մէջ՝ չգործի: Փաշան, ինչպէս երևում է Կ. Պոլսի լուրերից, տանից չէ կարողանում դուրս գալ, ժողովի չէ գնում, և ուրեմն չէ զմալվում իր սիրելի Օրմանեանի անունան դէմքով: Անիծեալ չարթկամացիներ: Օրմանեան իր սենեակից չէ դուրս գալիս, Արթին փաշան էլ իր ապարանքից—հապա էլ աղջկային գործերը ինչպէս առաջ ընթանան...

Վերջապէս մի չորրորդով:

—Ժանտախտը մօտենում է, հայր սուրբ, ինչ պիտի անենք, հարցրեցի ես իմ ծանօթ վարդապետին.

—Ինչ պիտի անենք, ոչինչ, կը գայ և կերթայ:

